# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.02.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ԱՄ-2019/27**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.02.2019թ. թիվ 27/26-3/1445-19 գրությամբ «Էլիտբաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 24.01.2019թ. թիվ ՄԳ 02-09/19 գրության հիման վրա, 04.02.2019թ. թիվ 27/26-3/1445-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Էլիտբաս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

## 2. «Էլիտբաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Էլիտբաս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 13.02.2019թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Էլիտբաս» ՍՊԸ-ն (այսուհետնաև՝ Ընկերություն) մասնակցել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպված «ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետնաև՝ Աճուրդ) և *1 և 2 չափաբաժինների մասով ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:*

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 25.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Այնուհետև, Աճուրդի գնահատող հանձնաժողովի 08.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել ուստի գնահատող հանձանժողովը որոշեց մերժել «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

*Իրավականհիմքերը և հիմնավորումները.*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ *գնմանգործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը,* որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ *գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:*

Ընկերությունը հայտնել է, որ «Էլիտբաս» ՍՊԸ-ն մասնակցել է <<Հայաստանի

հանրային հեռուստաընկերություն>> ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված <<ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/2>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Աճուրդի գնահատող հանձնաժողովը՝ 25.12.2018թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 6 կետի համաձայն որոշել է ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը հայտնել է, որ սահմանված ժամկետում «Էլիտբաս» ՍՊԸ-ն, այն է 28.12.2018թ. eauction.armeps.am համակարգի միջոցով ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, սակայն անհասկանալի պայմաններում 28.12.2018թ. նամակը ուղարկվել է Պատվիրատուին՝ կցված փաստաթղթերի բացակայությամբ:

«Էլիտբաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը կապ է հաստատել Աճուրդի քարտուղարի հետ և հայտնել, որ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը իրենց կամքից անկախ հանգամանքներում չեն կցվել և eauction.armeps.am համակարգը այլևս հնարավորություն չի ընձեռում նորից ուղարկելու համար:

Վերոնշված խնդիրը հարթելու համար՝ «Էլիտբաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 28.12.2018թ. Աճուրդի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ ի հավաստումն այն փաստի, որ փաստաթղթերը առկա են:

Ընկերությունը հայտնել է, որ Ընկերությունը փաստաթղթերը 28.12.2018թ. ուղարկելով Աճուրդի քարտուղարի էլեկտրոնային հասցեին՝ կից ներկայացրել է նաև գրություն՝ eauction.armeps.am համակարգի միջոցով ուղարկելու անհնարինության մասին:

Սակայն գնահատող հանձնաժողովի 08.01.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2 կետի համաձայն արձանագրվել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել ուստի գնահատող հանձանժողովը որոշել է մերժել «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված

հայտը և դա այն դեպքում, երբ «Էլիտբաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հեռախոսազանգի միջոցով հայտնել էր վերոնշված խնդիրների մասին:

Սակայն՝ 08.01.2019թ. Աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից ստանալով հայտը մերժելու մասին որոշումը՝ Ընկերությունը վերստին ուղարկել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, այս դեպքում արդեն ուղեկցական գրությամբ /կցվում է/ և խնդրել գնահատող հանձնաժողովին վերանայել հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնել այն հանգամանքը, որ «Էլիտբաս» ՍՊԸ-ն իրականացրել է հնարավոր բոլոր քայլերը՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը Պատվիրատուին ուղարկելու համար և քանի որ աճուրդային համակարգը թույլ չի տվել ևս մեկ անգամ փաստաթուղթ կցել և ուղարկել, այդ իսկ պատճառով այն ուղարկվել է Պատվիրատուի էլ. հասցեին, ենթադրելով, որ գնահատող հանձնաժողովը կգնահատի էլ. հասցեին ուղարկված շտկված փաստաթղթերը:

Ընկերությունը հայտնել է, որ «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստը քննելիս՝ հաշվի առնել, որ իրականում Մասնակիցը ձեռնարկել է բոլոր միջոցները՝ շտկված փաստաթուղթը գնահատող հանձնաժողովին սահմանված ժամկետում ներկայացնելու համար, սակայն համակարգի միջոցով փաստաթղթերը վերստին ուղարկելու հնարավորություն այլևս չի եղել և հենց այդ խնդրի պատճառով էլ այդ փաստաթղթերը երկրորդ անգամ հնարավոր չի եղել ուղարկել աճուրդի միջոցով:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և «Էլիտբաս» ՍՊԸ-ին չվերագրել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/27 ընթացակարգի շրջանակներում 08.02.2019թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.**

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.01.2019թ. թիվ ՄԳ/02-09/19 գրությամբ հայտնել է, որ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կարիքների համար տրանսպորտային ծառայությունների ձեռքբերման նպատակով 2018 թվականի դեկտեմբերի 13-ին հայտարարվել է «ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

2018 թվականի դեկտեմբերի 25-ի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստում, մրցույթի մասնակից «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մրցույթի մասնակցության հայտը արձանագրվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող:

Ներկայացված գնային առաջարկի հիման վրա 1-ին և 2-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Էլիտբաս» ՍՊԸ-ն: Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին որակավորման փաստաթղթեր չեն ներկայացվել:

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով՝ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, գնահատող հանձնաժողովի 2019 թվականի հունվարի 8-ի նիստում որոշում է կայացրել մերժել «Էլիտբաս» ՍՊԸ-ի հայտը՝ հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու հիմքով և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներակայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն խնդրել է Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 08.02.2019թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**4. ՍՑ-ԱՄ-2019/27 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ՍՑ-ԱՄ-2019/27 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կարիքների համար տրանսպորտային ծառայությունների ձեռքբերման նպատակով 2018 թվականի դեկտեմբերի 13-ին հայտարարվել է «ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգ (Այսուհետ՝ Աճուրդ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլիտբաս» ՍՊԸ-ն:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 25.12.2018թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Էլիտբաս» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Գնահատող հանձնաժողովի 08.01.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին որակավորման փաստաթղթեր չեն ներկայացվել, ուստի հանձնաժողովը որոշեց մերժել «Էլիտբաս» ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

4. «Էլիտբաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության «elitebus@mail.ru» էլեկտրոնային հասցեի համապատասխան էջի արտատպումները, համաձայն որոնց վերոնշյալ էլ. փոստի հասցեից 28.12.2018թ. ժամը 15:59-ին, 08.01.2019թ. ժամը 11:55-ին և 09.01.2019թ. ժամը 12:50-ին Eauction համակարգով ուղարկելու փոխարեն որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ուղարկվել են Ընթացակարգի քարտուղարի «hripsime.navasardyan@1tv.com» էլեկտրոնային փոստի հասցեին:

Միաժամանակ Ընկերությունը գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ բազմիցս փորձել է ուղարկել «ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրերով էլեկտրոնային աճուրդով պահանջվող որակավորման փաստաթղթերը, սակայն Eauction համակարգի տեխնիկական խնդիրների պատճառով չի ստացվել կցագրել փաստաթղթերը և խնդրել է Պատվիրատուին հիմք ընդունել էլ. հասցեին ուղարկված փաստաթղթերը:

**5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.02.2019թ. թիվ 27/26-3/1445-19 գրությունը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի 24.01.2019թ. թիվ ՄԳ/02-09/19 գրությունը և կից փաստաթղթերը, «Էլիտբաս» ՍՊԸ-ի 13.02.2019թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Նույն օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,*** բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը.

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված ***փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը,*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կարիքների համար տրանսպորտային ծառայությունների ձեռքբերման նպատակով 2018 թվականի դեկտեմբերի 13-ին հայտարարվել է «ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգ (Այսուհետ՝ Աճուրդ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլիտբաս» ՍՊԸ-ն:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 25.12.2018թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 3 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Էլիտբաս» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի 08.01.2019թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Էլիտբաս» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին որակավորման փաստաթղթեր չեն ներկայացվել, ուստի հանձնաժողովը որոշեց մերժել «Էլիտբաս» ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Էլիտբաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը 13.02.2019թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության «elitebus@mail.ru» էլեկտրոնային հասցեի համապատասխան էջի արտատպումները, համաձայն որոնց վերոնշյալ էլ. փոստի հասցեից 28.12.2018թ. ժամը 15:59-ին, 08.01.2019թ. ժամը 11:55-ին և 09.01.2019թ. ժամը 12:50-ին Eauction համակարգով ուղարկելու փոխարեն որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ուղարկվել են Ընթացակարգի քարտուղարի «hripsime.navasardyan@1tv.com» էլեկտրոնային փոստի հասցեին:

Միաժամանակ Ընկերությունը գրությամբ Պատվիրատուին հայտնել է, որ բազմիցս փորձել է ուղարկել «ՀՀՀ-ԷԱՃԾՁԲ-19/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով պահանջվող որակավորման փաստաթղթերը, սակայն Eauction համակարգի տեխնիկական խնդիրների պատճառով չի ստացվել կցագրել փաստաթղթերը և խնդրել է Պատվիրատուին հիմք ընդունել էլ. հասցեին ուղարկված փաստաթղթերը:

Ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված «elitebus@mail.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքները, ինչպես նաև հաշվի առնելով Ընկերության վարքագիծը, գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ուղարկվել են ոչ թե Eauction համակարգի միջոցով, ինչպես պահանջվում է Աճուրդի հրավերով, այլ սահմանված ժամկետում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, այն է՝ 28.12.2018թ. ուղարկվել են Ընթացակարգի քարտուղարի «hripsime.navasardyan@1tv.com» (Աճուրդի հրավերում նշված) էլեկտրոնային փոստի հասցեին, այնուամենայնիվ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտման փաստը, քանի որ «Էլիտբաս» ՍՊԸ-ն համապատասխան ծանուցումը ստանալուց հետո սահմանված եռօրյա ժամկետում փաստացի կատարել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում ուղարկելու պարտականությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Էլիտբաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.02.2019թ. թիվ 27/26-3/1445-19 գրությամբ «Էլիտբաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ